Արձանագրություն

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհրդի 2023 թ. մայիսի 15-ի թիվ 6 նիստի

ԼՍԵՑԻՆ. - Ժուռնալիստիկայի ֆակուլտետը Ժուռնալիստիկայի և հաղորդակցության ֆակուլտետ վերանվանելու մասին դեկան Ն. Մարտիրոսյանի զեկուցումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Դ. Վ. Պետրոսյան, Ն. Է. Վարդանյան, Դ. Հ. Ալավերդյան: Ելույթ ունեցողները փաստեցին, որ ֆակուլտետի ուսումնագիտական ընդգրկման ոլորտը շատ ավելին է, քան անվանումը: Նշվեց նաև, որ հարցին անդրադարձ է եղել համատեղ կազմակերպված ամբիոնային նիստի ընթացքում, քննարկվել են տարբերակներ, որոնցից ընտրվել է **Ժուռնալիստիկայի և հաղորդակցության ֆակուլտետ** անվանումը:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Դիմել ռեկտորին՝ հարցը ԵՊՀ գիտխորհրդի օրակարգ ընդգրկելու առաջարկով:

ԼՍԵՑԻՆ. - «Հեռուստալրագրություն» մագիստրոսական ծրագրի մեկնարկի մասին Ն. Վարդանյանի հաղորդումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Ն. Ն. Մարտիրոսյան, Ա. Շ Ավետիսյան, Մ. Մկրտչյան: Ելույթ ունեցողները անդրադարձան այն փաստին, որ այս ծրագրում սովորելիս ուսանողները միաժամանակ հետազոտական և պրակտիկ գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն են ունենալու:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. – Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մուլտիմեդիա լաբորատորիան վերակազմավորելու մասին դեկան Ն. Մարտիրոսյանի զեկուցումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ն. Է. Վարդանյան, Է. Ի. Թևոսյան:

Ելույթ ունեցողները խոսեցին վերակազմավորման անհրաժեշտության մասին: Քննարկվեց վերակազմավորման ռազմավարությունը: Նշվեց, որ մեդիակենտրոնը

կլինիկական ուսուցման և «իրական» կազմակերպության մոդելների համադրությունն է լինելու, իսկ աշխատանքի արդյունքը պիտի լինի չափելի և շոշափելի:

ՈՐՈՇԵՑԻՆ. – ա) Հիմք ընդունելով առաջարկված տարբերակները՝ վերակազմավորված մեդիալաբորատորիան կոչել Ինովացիոն մեդիակենտրոն:

բ) Դիմել ռեկտորին՝ վերակազմավորման հարցը ԵՊՀ գիտական խորհրդի օրակարգ ընդգրկելու առաջարկով՝ մինչ այդ քննարկելով նախատեսվող հաստիքացուցակը:

ԼՍԵՑԻՆ. – «Լրագրողական կրթություն. խնդիրներ, հանձնառություններ, պրակտիկաներ» թեմայով գիտաժողովի արդյունքների մասին Դ. Պետրոսյանի հաղորդումը:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. – Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Աստղիկ Շամսի Ավետիսյանի «Նոր մեդիա և հաղորդակցություն» մենագրությունը տպագրության երաշխավորելու խնդրանքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Զ. Ջ. Սարգսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Աստղիկ Շամսի Ավետիսյանի «Նոր մեդիա և հաղորդակցություն» աշխատանքը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ. – «Ուսանողական մեդիահարթակ» ծրագիրը ամփոփելու մասին դեկան Ն. Մարտիրոսյանի հաղորդումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Դ. Վ. Պետրոսյան, Ք. Ալազուլյան, Ա. Ռ. Մենեմշյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Ջ. ՍԱՐԳՍՅԱՆ